

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Արմեն-Համիկ եղբայրներ» ՀԶ սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն

31 դեկտեմբերի 2022թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	Ошибка! Закладка не определена.
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	4
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ.	2021թ.
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	1	572,729	493,448
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ		200	200
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	5	17,083	-
		590,012	493,648
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	2	3,474,207	4,328,316
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	3	10,779,080	9,271,485
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	4	182,920	429,835
Այլ ընթացիկ ակտիվներ		35,655	19,113
Ընթացիկ ակտիվներ շահութահարկի գծով			
		14,471,862	14,048,749
Ընդամենը ակտիվներ		15,061,874	14,542,397
<i>Կապիտալ և պահուստներ</i>			
Բաժնետիրական կապիտալ	6.1	132,400	132,400
Պահուստային կապիտալ	6.2		
Վերագնահատման պահուստ		83,228	101,000
Կուտակված շահույթ/(վնաս)		(328,221)	(653,551)
Սեփական կապիտալի այլ տարրեր	6.3		-
		(112,593)	(420,151)
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	7	879,720	239,951
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8		
Ոչ ընթացիկ այլ պարտավորություններ			
		879,720	239,951
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	608,769	774,672
Վարկեր և փոխառություններ	7	13,685,978	13,927,338
Պահուստներ			20,587
Ընթացիկ պարտավորություններ շահութահարկի գծով			
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		15,061,874	14,542,397

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 23.02.2023թ.

Մ. Անդրեասյան
 Տնօրեն

Վ. Ավագյան
 գլխ. հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ.	2021թ.
Շարունակվող գործունեություն			
Հասույթ	10	14,568,904	10,348,660
Վաճառքի ինքնարժեք	11	(13,581,630)	(10,554,055)
Համախառն շահույթ		987,274	(205,395)
Իրացման ծախսեր		(77,489)	(59,185)
Վարչական ծախսեր	12	(479,494)	(248,800)
Այլ ծախսեր	13	(590,545)	(22,024)
Այլ եկամուտ	13	833,725	-
Ոչ գործառնական շահույթ/վնաս			
Ֆինանսական ծախսեր		(245,957)	(97,561)
Շահույթ մինչև հարկերը		427,514	(632,965)
Շահութահարկի գծով ծախս/(վոխհատուցում)	14	(1,687)	-
		-	-
Տարվա շահույթ		425,827	(632,965)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		425,827	(632,965)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետմեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե- տիրական կապի- տալ	Պահուստային կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Կուտակ- ված շահույթ/ (վնաս)	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ Ճշգրտումներ	132,400	101,000		(653,551)	(420,151)
Տարվա շահույթ/վնաս 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	132,400	101,000		(653,551)	(420,151)
Տարվա շահույթ/վնաս Շահաբաժինների վճարում 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	132,400	83,228		(328,221)	(112,593)
		(17,772))	425,827	425,827
				(100,497)	(118,269)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Գործառնական գործունեություն		
Ապրանքների իրացումից ստացված դրամական հոսքեր	14,574,313	10,008,624
Այլ գործառնական մուտքեր	159,958	3,506,212
Վճարումներ մատակարարներին նյութերի, ապրանքների գծով	(12,161,033)	(11,640,131)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(217,990)	(143,549)
Վճարումներ բյուջե	(2,910,839)	(4,159,589)
Այլ գործառնական ելքեր	(345,358)	(256,361)
<i>Գործառնական գործունեության դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<u>(900,949)</u>	<u>(1,856,500)</u>
Ներդրումային գործունեություն		
Տոկոսների ստացումից		399
Ներդրումային այլ գործունեությունից մուտք		
Ոչ ընթացիկ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(9,039)	(276,547)
Ներդրումային այլ գործունեությունից ելք		
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր</i>	<u>(9,039)</u>	<u>(276,148)</u>
Ֆինանսական գործունեություն		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտք	6,311,655	9,799,805
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(245,912)	(304,986)
Ստացված վարկերի, փոխառությունների մարում	(5,402,670)	(9,176,464)
Այլ ֆինանսական մուտքեր		2,330,843
Այլ ֆինանսական ելքեր	-	()
<i>Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	<u>663,073</u>	<u>2,649,198</u>
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք		516,550
Արտարժույթի փոխարժեքի տարբերություններ		172,205
Դրամական միջոցներ տարվա սկզբում	<u>429,835</u>	<u>69,510</u>
Դրամական միջոցներ տարվա վերջում	<u>182,920</u>	<u>429,835</u>

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Արմեն-Յամիկ» ՀԶ ՍՊԸ ընկերությունը հանդիսանում է «Աստղիկ-95» արտադրական կոոպերատիվի» ունեցվածքային իրավունքների և պարտավորությունների իրավահաջորդը, իր գույքի բացառիկ սեփականատերը և դրա նկատմամբ տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքը իրականացնում է իր կանոնադրական նպատակներին և խնդիրներին համապատասխան: Ընկերությունը ավելի քան 20 տարի գտնվում է միջազգային շուկայում և հանդիսանում է սուրճ արտադրող առաջատար ընկերություններից մեկը Հայաստանում: Ընկերության գտնվելու վայրն է Կոտայքի մարզ, գ.Գեղաշեն, փող.1, 7-րդ նրբանցք, տուն 2: 2022թ. Ընկերության աշխատակիցների ցուցակային թվաքանակը կազմել է 162 աշխատող:

2. Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վարվող հաշվապահական հաշվառման գրանցումների հիման վրա և ձգարտվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն ներկայացնելու նպատակով:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ոչ ընթացիկ ակտիվների և ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվում են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է, որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույն կերպով է արտացոլում համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական էությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կատարի կարևոր գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

2.6 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը. 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում է 393,57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420,05 ՀՀ դրամ, իսկ 1 ռուսական ռուբլին՝ 5,59 ՀՀ դրամ:

Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքով: Այն ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման ոչ դրամային հոդվածների դեպքում շահույթի կամ վնասի ցանկացած փոխարժեքային բաղադրիչ նույնպես ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

2.8 Հիմնական միջոցներ

Սկզբնական արժեքով հաշվառվող հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռք բերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները, որոնք պահվում են վարձակալության կամ վարչական կամ դեռևս անորոշ նպատակով, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրվող ծախսումներ, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության որդեգրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է այնպես, ինչպես որ նմանատիպ հիմնական միջոցների մաշվածությունը և երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված հիմնական միջոցները ընդգրկվում են հիմնական միջոցներում: Նրանց մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի ակնկալվող օգտակար ծառայության (համեմատելով սեփական համանման ակտիվների հետ) կամ վարձակալության ժամկետի ընթացքում, եթե վերջինս ավելի կարճ է:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրս գրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ միասին: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

2.9 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

2.10 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով:

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է:

2.11 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է, օգտագործելով առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) և ներառում է պաշարների ձեռք բերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը: Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ ինքնարժեքի մեթոդով: Պահեստամասերի ինքնարժեքը հաշվարկվում է դրանց վաճառքի գնի նկատմամբ կիրառելով առևտրային հավելագին:

2.12 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալից ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք արվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես

դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ, որոնց իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝

- վարկեր և դեբիտորական պարտքեր,
- ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները, կախված գործիքի բնույթից և նպատակից, սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասերը պետք է ճանաչվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեքի կման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «ֆինանսական ծախս» և «ֆինանսական եկամուտ» հոդվածներում:

- (i) ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

Ֆինանսական ակտիվները, որոնց իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական ակտիվներ, որոնք սկզբնապես ճանաչման պահին դասակարգվել են որպես ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

(ii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով սեփական կապիտալում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ, երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, փոխանցվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե համապատասխան աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

(iii) Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ

Ֆիքսված մարման ժամկետով և ֆիքսված կամ որոշելի վճարումներով մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են: Ներդրումները դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող, եթե Ընկերության ղեկավարությունը մտադրված է պահել դրանք մինչև դրանց մարման ժամկետը:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ի լրումն, ֆինանսական ակտիվը չափվում է գնահատված դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքով, եթե առկա է ներդրումների արժեզրկման օբյեկտիվ ապացույց: Ներդրման հաշվեկշռային արժեքի ցանկացած փոփոխություն ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

(iv) Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները սկզբնապես սահմանված ժամկետներում: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և ժամանակին չվճարումը ցուցանիչ է այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը դա ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

(v) Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդներ դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցներ, բանկային հաշիվների մնացորդներ և դրամական միջոցներ ճանապարհին, որոնք ներառվում են «վարկեր և դեբիտորական պարտքեր» ֆինանսական ակտիվների կատեգորիայում:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը՝ ներառյալ ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռք բերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերաբերող փոխառությունների ծախսերից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի մի մաս:

(i) Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում՝ ամորտիզացված արժեքով:

2.13 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստը դիտվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորուստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորուստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների, որոնց իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է, ճանաչվելով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այն չափով որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ինչ վերաբերում է վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի արժեթղթերին, արժեզրկումից հետո իրական արժեքի աճն ուղղակիորեն ճանաչվում է սեփական կապիտալում:

2.14 Վաճառքի համար մատչելի ոչ ընթացիկ ակտիվներ

Երբ Ընկերությունը մտադրություն ունի վաճառել ոչ ընթացիկ ակտիվներ կամ ակտիվների խումբ և երբ վաճառքի հավանականությունը 12 ամիսների ընթացքում բարձր է, ապա ակտիվը կամ ակտիվների խումբը դասակարգվում և ներկայացվում են հաշվապահական հաշվեկշռում որպես վաճառքի համար մատչելի ակտիվներ:

Վաճառքի համար մատչելի ակտիվները չափվում են ակտիվի մինչև վերադասակարգումն ունեցած հաշվեկշռային արժեքից և իրական արժեքի և վաճառքի ծախսերի տարբերության նվազագույնով: Այս ակտիվները չեն ամորտիզացվում: Այնուամենայնիվ, վաճառքի համար մատչելի որոշ ակտիվներ, ինչպիսիք են ֆինանսական ակտիվները և հետաձգված հարկային ակտիվները, հաշվառվում են սովորականի պես:

Վաճառքի համար մատչելի ակտիվների վաճառքից կամ վերագնահատումից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում համապատասխանաբար «այլ եկամուտ» կամ «այլ ծախսեր» հոդվածներում: Վաճառքի դեպքում տվյալ ակտիվի գծով սեփական կապիտալում առկա վերագնահատման պահուստը վերագրվում է կուտակված շահույթին:

2.15 Սեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

2.16 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Ընկերությունը կատարելու է դրան կից բոլոր պայմանները և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանն այն է, որ Ընկերությունը պետք է գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ, հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Ընկերությանն ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն, առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

2.17 Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

2.18 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հիմք է ընդունում ֆինանսական հաշվառման համար ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակներով հաշվառվող արժեքների ժամանակային տարբերությունները:

Հետաձգված շահութահարկի հաշվարկված գումարը հիմնված է ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների իրացման կամ մարման ենթադրվող տարբերակի վրա՝ կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերը:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այն չափով, որքանով այլևս հավանական չէ, որ դրան առնչվող հարկային օգուտները կիրացվեն:

2.19 Հասույթի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Ընկերության կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթից նվազեցվում են ապրանքների գնահատված վերադարձները, գնահատված իջեցումները և նմանատիպ այլ նվազեցումներ:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն,
- հնարավոր է արժանահավատորեն որոշել հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանը, և
- հնարավոր է արժանահավատորեն որոշել գործարքի կատարման ժամանակ արված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Եկամուտ տոկոսներից և շահաբաժիններից

Շահաբաժիններից եկամուտը ճանաչվում է, երբ սահմանված է վճարը ստանալու բաժնետերերի իրավունքը:

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը գեղջում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի գուտ հաշվեկշռային արժեքը:

Վարձակալական եկամուտ

Ներդրումային գույքից վարձակալական եկամուտը ճանաչվում է գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

4.1 Հիմնական միջոցներ

000 դրամ

	Շենքեր	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորու- մներ	Տրանսպորտ ային միջոցներ	Այլ տարրառև տեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք							
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	266,358	130,507	316,954	15,602	56,295	12,118	797,834
Ավելացումներ							
Նվազեցումներ							
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	266,358	130,507	316,954	15,602	56,295	12,118	797,834
Ավելացումներ	97,481		22,235	19,842	19,432		158,990
Նվազեցումներ			2,070	6,614			8,684
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	363,839	130,507	337,119	28,830	75,727	12,118	948,140
Կուտակված մաշվածություն							
Առ 31 դեկտեմբերի 2020թ.	2,838	6,657	245,941	8,164	34,288	6,498	304,386
Տարվա մաշվածությունը							
Նվազեցումներ							
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	2,838	6,657	245,941	8,164	34,288	6,498	304,386
Տարվա մաշվածությունը	16,203	16,251	29,830	917	8,981	275	72,457
Նվազեցումներ			1,427	5			1,432
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	19,041	22,908	274,344	9,076	43,269	6,773	375,411
Առ 31 դեկտեմբերի 2021թ.	263,520	123,850	71,013	7,438	22,007	5,620	493,448
Առ 31 դեկտեմբերի 2022թ.	344,798	107,599	62,775	19,754	32,458	5,345	572,729

2. Պաշարներ

	2022թ.	2021թ.
Հազար դրամ		
Հումք և նյութեր	678,255	651,440
Պատրաստի արտադրանք	35,433	61,316
Ապրանք	2,760,519	3,615,560
	3,474,207	4,328,316

3. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2022թ.	2021թ.
Հազար դրամ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	9,877,831	6,954,757
Տրված կանխավճարներ	664,182	1,728,896
Դեբիտորական պարտքեր պետական բյուջեին	237,067	587,832
Այլ	-	-
	10,779,080	9,271,485

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն աշվարկվում: Դեկավարությունը հավատացած է, որ դեբիտորական պարտքերը ամբողջովին վերականգման ենթակա են:

4. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

	2022թ.	2021թ.
Հազար դրամ		
Կանխիկ միջոցներ	175,841	142,361
Բանկային հաշիվներ	7,079	287,474
	182,920	429,835

5. Սեփական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 132,400 հազ.դրամ, որը բաղկացած է 132,400 հատ բաժնեմասերից՝ յուրաքանչյուրը 1000 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են և վճարված են Ընկերության մասնակիցների կողմից: Բաժնեմասերի 35 տոկոսը պատկանում է Համագասպ Անդրեասյանին, 28 տոկոսը՝ Ժամսեհա Անդրեասյանին, 18 տոկոսը՝ Արմեն Անդրեասյանին, 17 տոկոսը՝ Հասմիկ Անդրեասյանին իսկ մնացած 2 տոկոսը՝ Մարտիկ Անդրեասյանին:

6. Վարկեր և փոխառություններ

6.1 Պարտավորություններ ստացված վարկերի գծով

Հազար դրամ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ	Ոչ ընթացիկ	Ընթացիկ
	2022	2022	2021	2021
Վարկեր	879,720	955,282	239,951	3,490,388
Փոխառություններ	-	12,730,696	-	10,436,950
	879,720	13,685,978	239,951	13,927,338

Ընկերության ունեցած վարկի գծով ընթացիկ պարտքի մնացորդը 31.12.2022թ. դրությամբ կազմել է 955,282 հազ.դրամ, իսկ ոչ ընթացիկ պարտավորությունների մնացորդը՝ 879,720 հազ.դրամ:

2022թ. ընթացքում վարկի գծով հաշվեգրվել է 245,957 հազ.դրամ տոկոսագումար, որն արտացոլված են «Ֆինանսական ծախսեր» հոդվածում:

Ընկերությունը կապակցված կողմից ունի ստացված ընթացիկ փոխառություններ, որոնց գծով պարտքի մնացորդը 31.12.2022թ. դրությամբ կազմել է 12,730,696 հազ.դրամ:

8. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ.	2021 թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	591,052	759,123
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	5,726	4,734
Աշխատավարձի գծով պարտք	11,991	10,815
Այլ պարտքեր	-	-
	608,769	774,672

10. Հասույթ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Ապրանքների իրացումից	12,833,019	
Արտադրանքի իրացումից	1,279,886	
Այլ եկամուտ	63,955	
	14,176,860	10,348,660

11. Վաճառքի ինքնարժեք

	2022թ.	2021թ.
Հազար դրամ		
Աշխատանքի վարձատրություն		
Ուղղակի նյութական ծախսումներ	12,417,534	7,689,870
Այլ	1,164,096	2,864,185
	13,581,630	10,554,055

12. Վարչական ծախսեր

	2022թ.	2021թ.
Հազար դրամ		
Աշխատանքի վարձատրություն	217,392	120,687
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	1,223	97
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	106,323	38,855
Ընթացիկ վերանորոգման ծախսեր և մաշվածք	72,755	45,813
Վարչական այլ ծախսեր	81,801	43,348
	479,494	248,800

13. Իրացման ծախսեր

	2022թ.	2021թ.
Հազար դրամ		
Մարկետինգի և գովազդի ծախսեր	7,388	140
Հիմնական միջոցների մաշվածքի ծախսեր	15,750	8,561
Այլ ծախսեր	54,351	50,484
	77,489	59,185

14. Շահութահարկի գծով ծախս

	2022թ.	2021թ.
Հազար դրամ		
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	1,687	-
	1,687	-

3. Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

3.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Ընկերությունն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին:

4. Պարտավորություններ

4.1 Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով

Ընկերությունը որպես վարձակալ

Վարչական շենքը, ինչպես նաև կազմակերպության տարբեր հասցեներում գտնվող տարածքների օգտագործումն իրականացվում է կնքված գործառնական վարձակալության պայմանագրերի հիման վրա: Ընկերությունը մտադրություն չունի ձեռք բերել վարձակալված ակտիվները վարձակալության ժամանակաշրջանի վերջում:

4.2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

Հայաստանում բիզնեսի կապիտալում օտարերկրյա կապիտալի համեմատաբար փոքրածավալ ներգրավվածության, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեջ համեմատաբար քիչ օտարերկրյա ներդրումների և համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից համեմատաբար մեկուսացման արդյունքում, ավելի զարգացած և ձևավորված տնտեսությամբ երկրներում առկա ֆինանսական ձգնաժամը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ այնքան էլ խիստ և նկատելի չէ Հայաստանում:

Այնուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ցնցումների պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Ընկերությունը կարող է ընկնել այդ ձգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Ընկերության վրա հնարավոր հետևանքները կարող են ներառել վարկատուների հանդեպ անվճարունակությունը, թուլացած հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված ռիսկավորությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող

են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների մնացորդային արժեքների վրա:

Հետևաբար, Ընկերության համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ Հայաստանում:

4.3 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերության չունի իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Ընկերության գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

4.4 Հարկային պարտավորություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ պահանջում է մեկնաբանություններ: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են վերանայման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իշխանությունների մեկնաբանությունները կարող են տարբերվել և դրա ազդեցությունը կարող է զգալի լինել:

5. Գործարքներ կապակցված կողմերի միջև

Կապակցված կողմեր են հանդիսանում Ընկերության մասնակիցները:

5.1 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ղեկավարության անմիջական ազգականները Ընկերության գործունեությունում էական մասնակցություն չունեն : Հիմնական ղեկավար անձնակազմը 2022թ. ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառում է`

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Աշխատավարձ և պարգևատրումներ՝ ներառյալ սոցիալական ապահովագրության վճարներ	3,360	3,360

